

„ՄՈՒՐՃ“-Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԳԵՕԿԶԱ. (Բաք. Նահ.) պ. Աղբալեանցին: Ստացանք «Մշակ»-ի խմբագրութիւնից Զեր. ուղարկած ուսուցչական 3 բուրլին:

ԱԼԵԲՍԱՆԴՐՈՊՈԼ. պ. Ա. ին: Զեր «Թ. 1...» մենք հաւանեցինք, թէպէտ և նմանողութիւն է լերմոնտովի լպտնի ոտանաւորի: Բայց գտնում ենք, որ մշակման դեռ ևս կարօտ է: Գլխաւոր պակասութիւնը սա է, որ զբաւարը աշխարհաբարի հետ շատ է խառնած՝ ոտը և չափը կանոնաւորելու մոքով: Այդ նշանակում է խոտովանել զուտ աշխարհաբարի անբաւարարութիւնը բանաստեղծական գործքերի համար: Արձակ գրողները այդ կարծիքը վաղուց է, որ թողել են. արդէն ժամանակ է, որ չափով գրողներն էլ այդ սովորութիւնը թողնեն: «Տաճկա-Հալը» թու է, իսկ «Գարնանակին գիշերը», ըստ մեզ, ներկայացնում է զգացմունքների մի շփոթ և արւեստական գրւածք:

ԲԱՔՈՒ. Դ-ր. Զալեանցին: Հասցրինք «Մշակ»-ի խմբագրութեան Զեր 10 ր. և «Արձագանք»-ին 5 ր.

ՊԱՐԻՋ. Ուսանող պ. Ա. Բաբալեանցին: Նրկու բուրլի աւելի էք ուղարկել, ուստի և վերադարձրինք:

ԹԵԼԱԻ. պ. Գր. Բաղդասարեանին: Զեր առաջարկութիւնը ընդունելի է. բայց կը տպագրւի թէ ոչ—այդ կախած է գրւածքից: Առանձին խոտմունքներ անել չենք կարող:

ԱԼԵԲՍԱՆԴՐՈՊՈԼ. Հեղինակին «Տեսարան Դաղստանի լիւններում», «Սիրող զոհի» և «Էքսպրոմպտի»: Անկարմար գտանք:

*** Տեսնողին: Զեր «Ծով» բանաստեղծութեան առաջին և վերջին տունները միայն փոքր ինչ աջողած են. մնացեալ նկարագրական մասը թու է—«Դարբնի Մուրճը» ստացանք. կը պահենք միայն իբր փշտակ:

ՄԵՆՎԱՐԱՔԼԻՍ. Խորէն քահանայ Խանդաղեանցին: Ուսուցիչները և ուսանողները, բայց ոչ ուսումնարանները վաչկում են զիջումներ «Մուրճ»-ը ստանալու համար: Մի ուսումնարան ամսագիր ստանալ, որից օգտւին 10—20 հոգի և դեռ աւելի պակաս վճարի,

քան մի սովորական բաժանորդ? Դուք մնում էք պարո 2 ը.

ՄՈՆՊԵԼԻԷ. Հալ ուսանողութեան. Ասիաբազից պ. Խուրչիդ Մնացականեանցը ուղարկել է մեզ 10 ռուբլի, որպէս բաժանորդագին, «Մուրճ»-ը ձեր անունով ուղարկելու համար. Օգոստոսի դէպքից, կատարում ենք պ. Մնացականեանցի խնդիրքը՝ լպտենել նորա ջերմ համակրութիւնը դէպի ձեզ և առաջադիմութեան ու կատարեալ աջողութեան ցանկութիւնը ձեր ասպարիզի վերայ:

ՍԱՐԱԿԱՄԻՇ. Պ. Գր. Բաբա-Քեօխանեան, կապիտան 156 Նիսսաւետոպ. հետեակ պօլիի, Կ'ուղարկւի «Մուրճ»-ը, ում համար ուղարկած էք տարեկան բաժանորդագինը:

ԲԱՔՈՒ. Մեղիք. Ստացանք «Հալ գիւղացու սե օրը»: Դեռ չենք կարդացել. Մեր վճիռը կը լպտենենք Ձեզ առանձին նամակով:

ՂԱԼԱՐ. Պ. Մ. Մարգարեանցին. Արդարեւ, ուղարկողը Դուք էք. Ձեր կամքի համաձայն, ալդ մի ռուբլին լատկացրինք «Մուրճ»-ի ֆոխատու-Խնալողական դանձարանի ֆօնդին. Շնորհակալ ենք:—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՈԼ. Դարբնին. Ձեր ոտանաւորից կը քաղենք միայն տաքութիւնը, որ մեզ մօտ պահենք, բայց չենք տալի:

ՅՂՆԱ. Հալոց ծխական դպրոցի վարչութեան. Ուղարկում ենք «Մուրճ»-ը դպրոցին; որպէս նւէր՝ պ. պ. Յովհաննէս և Աբրահամ Բունեաթեանցների կողմից:

ՋԱՔԱԹԱԼ. Հալոց ծխական դպրոցի վարչութեան. «Մուրճ» ամսագիրը դպրոցիդ անունով ուղարկելու համար, ստացանք Նուխոց պ. պ. Յովհաննէս և Աբրահամ Բունեաթեանցներից նւէր 10 ռուբլի, որ մենք չեա վերադարձրինք նրանց, որովհետեւ նոքա ալդ նւէրը արեւ էին՝ ենթադրելով թէ դպրոցը չի ստանում:

ԲԱՔՈՒ. Ուսանողին. Ձեր ուղարկածը չի տպւիլ, որովհետեւ «Մուրճ»-ը չի կարող և չը պիտի խակ գրւածներին տեղ տալ. Ժողովուրդը մեզնից իրաւացի կերպով խիստ պահանջներ է անում, իսկ մեր պահանջը զեռ աւելի էլ խիստ է, քան ժողովրդինը: Բանաստեղծութեան մէջ մենք որոնում ենք զգացմունք և զգացմունքի բանաստեղծօրէն արտայայտութիւն. չօրւածների մէջ մենք որոնում ենք միտք և օգտակար նիւթեր, նպատակալարմար կերպով դասաւորած և լոգիքապէս ուսած. վէպերի մէջ որոնում ենք՝ ճիշդ դիտած իրական կեանքի զեղարւեստական նըկարագրութիւն. Հոգ չէ, եթէ գրւածքը թերութիւններ ունի,— բայց նա պէտք է ունենալ այն լատկանիւնները, Դուք խրախոյս էք ուղում մեզնից, ալդ խրախոյսը տալիս ենք Ձեզ—առաջարկելով, որ միշտ կարդաք «Մուրճ»-ը:

ՇՈՒՇԻ. Որտեղից թարգմանչին: Ձեր ուղարկածի մէջ մենք առ ալժմ
նիւթ չը գտանք «Մուրճ»-ի համար: Բաց դեռ ես տեսնեմք:
Յետ կ'ուղարկենք, երբ բոլորը կարգացած կը լինենք:

ԹԻՖԼԻՍ. Պ. Ք. Թ.-ին. «Պատանուն» ոտանաւորը չի տպւիլ: Պետսիմիզմը
լարգելի է միայն կեանքի դառնութիւնները քաշած մարդու
բերնում. բաց նա գրօշ չարժէ, երբ լոկ դատողութիւն է:

ՇՈՒՇԻ. պ. Լէօն: Այս ձե-ի մէջ տպւած տողերից մի քանիսը Դուք նշի-
րում էք հացի արտահանութեան և հացի թանկանալու խնդրին
և, ալլա առիթով, Դուք հեղեղութիւն էք ցոյց տալիս դէպի այն
մարդիկ, որոնք, թւանշանները ձեռքին, միամտութիւն ունին
հրճելու հացի առևտուրի պատմութեան նոր ֆազիսով: Իբր թէ
ալլա մարդիկ, բացի թւանշաններից, էլ ոչ գիւղացի տեսած լի-
նին և ոչ գիւղեր: Թոյլ տէ՛ք մեզ նկատելու, որ նա, ով մեզա-
նում հացի արտահանութիւնից առաջին անգամ ընդհանուր
խնդիր չինեց թէ մեր և թէ ուսաց գրականութեան մէջ, նա,
ասում ենք, մինչ հարիւր անգամ աւելի գիւղեր է տեսել և
մինչև անգամ հետադառել, քան ինչ որ Դուք Ձեր ճանապար-
հորդութեան մէջ տեսած էք: Թւանշանները Դուք արհամարհում
էք, բաց անիրաւացի կերպով. թւանշանները ինչպէս հարկն
է կարգալու համար մի ամբողջ գիտութիւն կալ, որ ստիտիա-
տիք է կոչւում և որը ձեռք է բերւում միմիայն երկար ժամա-
նակ ուսանելով: Դուք ասում էք, թէ գիւղացին պարապ հողեր
չի վարում, որովհետեւ նա գիւղացի է. բաց ոչ. նա չի մշա-
կում, որովհետեւ գիտէ թէ Ձեր ուղած հացի գնով նա ինչ
օգուտ, ինչ խէր կը տեսնի. բաց Ձեր ուղած գներին նա սովոր
էր ցալժմ. երբ բարձրացած գների ազդեցութիւնը կը տարած-
ւի նաև Ձեր ալցելած գիւղերի վերալ և փոքր ինչ էլ ճանա-
պարհները կը հարթւին—նոյն ալլա գիւղացիք կը սկսեն հողը
մշակել, ինչպէս Դուք էք ցանկանում: Դուք տեսնում էք, ու-
րեմն, որ Ձեր մի ցանկութեամբ չէզոքացնում էք Ձեր
միւս ցանկութիւնը, որ դուք Ձեզ հակասում էք, ներշնչելով
ուրիշ տեղից քաղած սովետաութիւններին:—

ԲԱՔՈՒ. պ. Ա. Թում.—Ձեր խնդրած տեղեկութիւնները քունջութի մը-
շակութեան մասին կը հաղորդենք Ձեզ շուտով առանձին նամակով:

ԲԱՔՈՒ. պ. Կ. Լ.-ին: Մենք պարտաւոր ենք համարում պատասխանել մի-
միայն մեր բաժանորդներին: